


բայց աւելի երջանիկ և փայլուն բողբոջներ նա երազում էր ապագայում: Սակայն անբաղդ բանաստեղծին վիճակուած չէր տեսնել այդ բողբոջները: 1595 թ. ապրիլի 25-ին նա արգէն մեռած էր: Միմիայն նրա անչնչացած գիտելը արժանացաւ ազգային այդ մեծ պատուին և առանձին Հանդիսով պահուեց Հոռովմուսի Յաւիտենական քաղաքի պատմական բըլուրներից մէկի վերայ: Սուրբ Օնուֆրիոսի վանքում—ուր պատուապարուած էր Տիւանդ բանաստեղծը և ուր նա վախճանուեց—կայ մի Հասարակ գերեզմանաքար: որ իբրև սրբութիւն գրաւում է բոլոր ուխտաւորներին:

«Torquati Tassi ossa hic jacent» (այստեղ Հանդ-  
չում են Տորկուատո Տասսոյի ոսկրները) գրուած է այդ գերեզմանաքարի վերայ:

**Մ. Բերքերեան:**



**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**

Շ Ո Ւ Ո Տ Ե Ւ Դ Ո Ւ Վ Ա Ք .

(Ժողովրդական հաւատալիք):

Հուռտներն ըստ Հայոց հեթանոսական աւանդութեան անտեսանելի ոգիներ են և անթիւ. Գոլվաթներն ևս անտեսանելի ոգիներ են, բայց սակաւաթիւ:

Հուռտներն սերած են 'նոյ նահապետի Քամ որդիէն: Երբ 'նոյ տապանն մտաւ, ըստ Աստուածաշունչ սուրբ գրոց «Եմուտ 'նոյ և որդիք նորա կին նորա և կանայք որդւոց նորա» ասելով 'նոյը իր կնոջմէ, որդիքն իրենց կանանցմէ բաժանուած կը համարուի: որովհետեւ 'նոյի անուը յիշելէ անմիջապէս յետոյ, կնոջ անուը յիշելու որդւոց անուը յիշած է: 'նոյպէս որդւոց և որդոց կանանց մէջ տեղ իրենց մօր անուն յիշած է: Այսպէս ոմանք (Ժողովուրդէն) կուզեն հաստատել թէ, տապանը սուրբ է, պէտք է այնտեղ սրբութեամբ անցնել:

Քամ անհաւատարիմ զանուեւրով Աստուծոյ կարգադրութեանը, տապանի սրբութիւնը չյարգելով մերձեցաւ իր կնոջ, որմէ ունեցաւ մի որդի:

Անցաւ մի տարի: Աստուծոյ հրեշտակն երբ տապանի դուռն բացաւ, ութ հոգին համարելով դուրս հանեց: հարցուց Քամին:

- Աւրիշ մարդ կայ ներսը:
- Չկայ, պատասխանեց ամութահար Քամ:
- Եթէ կայ, շիբ դառնայ, ասաց հրեշտակն:

'տրածին մանուկը աներեւոյթ ոգիի մը փոխուեցաւ: օր ըստ օրէ զօրացաւ: մարդկային սերունդին հետ ամուսնացաւ: ունեցաւ զաւակներ: որք ևս աներեւոյթ ոգիներ են:

Հուռտներն շատ աճեցան: նոքա ծնունդ ունին իսկ մահ չունին. վասն որոյ աշխարհի ամեն կողմ բռնած են:

Գոլվաթներն որպէս ասացի սակաւաթիւ: բարի ոգիներ են: նոքա բնակութիւն հաստատած են միայն հարուստ տներու մէջ, նաև այն տներու մէջ գտնուած լաւ լաւ եղներու և գոմէշներու մտուրքն է իրենց բնակարանը: իրենց գտնուած տունը ամեն բարեօք պիտի լեցնեն:

Հուռտներն որչափ որ անտեսանելի ոգիներ են, սակայն ուտող և սպառող բնութիւն ունին: այն տնէն որ գոլվաթն բացակայ է, ամեն ինչ կը վերջացնեն: կը մանկն նաև գոլվաթուր տներ, կսկսին սպառել մարդկային աշխատութեան արդիւնքը և գոլվաթին լցած բարիքը:

Գոլվաթ կայցելէ իր բնակած տան ամեն մասերը: շուռտի սպառածի տեղն անմիջապէս կը լրացնէ: դարձեալ իր տեղն կը հաստատուի:

«Հուռտն մեղաց պտուղ ա»: սուրբ ամուսնութեան ծնած չեն: որոյ համար ամեն չարութիւն ի գործ կը դնեն: իմրով կը շրջապատեն ցորեանի հորն: այիւրի ամբարն: եղի բղիկը:

'Նիհար ու հիւանդոտ անասուններն կը շրջապատեն: կսպանեն որ սատակի: չար և ազացի հարկանոց և վնասակար անասուններն կը սիրեն: այն ինչ որ գոլվաթ չսիրեր. կամուսնանաւ մարդոց հետ երբ մարդիկ, քնոյ մէջ են. շատ անգամ կը յիշեն մարդիկ: որ երազի մէջ ամուսնացած են: նոքա շուռտներ են: որով զաւակներ կուենան:

Այսպէս այս «մեղաց պտուղներն» մի օր աշխարհ կը լեցնեն: այլ ևս մարդկանց բնակութեան վայր մի չպիտի մնայ:

Հուռտներն կը սիրեն տաք վայրեր: իրենց փոքր կշտացնելու համար տան ամեն մասերու հետ յարաբերութիւն ունին: ասեղի մի ծակէն անգամ կարող են անց ու դարձ անել: Ցաք տեղերն կաճին ու կզօրանան: ցուրտ տեղերն կընկճին և կը հիւժին:

Գոլվաթներն բարի նախանձէ շարժեալ կրկին և կրկին այցելութիւն կտան աշխատասէր գոմշու: եղան կթան կովու: ցորեանի հորի: այիւրի ամբարի: տան շուրջը և մառախը: շուռտի սպառածը կը լրացնեն:

Կայցելեն նաև գոմը: կը բառնան ոչխարներու հիւանդութիւնը:

Այսպէս յաճախ գոլվաթին շինածը շուռտ կը քանդէ: շուռտի սպառածի տեղն գոլվաթ կը լրացնէ: Փետրուար ամսոյ մէջ մրցումը մեծ է:

Ամբողջ ձմեռն դռները փակ էին: ներսը տաք և բարիքով լեցուն էր: մարդոց այնչափ հոգ չէր որ շուռտներն կսպառեն: զի սպառուածը աչքի չէր առնէր: այժմ զգացած է: տան տէրն որ շուռտներն սպառած են տան ամեն բարիք: կզգայ որ երկու ամիս ևս ձմեռ ունի իր առջև:

Մրցումը մեծ է: շուռտներն համարձակութիւն գտած և խուճիկը կազմած են: կսպառնան սպառել տան ամեն բարիք: գոլվաթը նեղը լծելով դուրս արտաքսել՝ որպէս զի գրաւեն նոցա բնակարաններն ևս: և տան ամեն մասերու մէջ հաստատուին:

Ամեն հնար և միջոց ձեռք առնուած է: մրցումը սաստիկ է: շուռտի խուճիկը ամբողջ ձմեռն պատրաստի բարիքներն վայելած է և զօրացած: գոլվաթն ցմիշտ զբաղուած էր շուռտի սպառածի տեղն լեցնել: որով յոգնած և լքուած է:

Մարդոց այժմ զգալի դարձած է որ տան բա-

1. Փետրուար ամսուան Շուռտ կասեն Բագրեւանդայ հայեր, իսկ թուրքեր Շուլպաթ. նաև անտեսանելի ոգիներուն Շուռտ. մեծն աղէկներ, այլ տեղեր յալքելի: Մեղատին, եւ այլն:

րիբը մի աներևոյթ ձեռքէ կը յափշտակուի. կըզգայ որ դոյզաժի ոյժը այլ ևս սպառած է:

Հուռտաներն ևս զգացած են զայս, մեծ բանակ կը կազմեն որպէս զի Լբուած գոյվածներն արտաբանն կախը փետրուար 14-էն մինչև 20-ը կը տէէ, գոյվածներն կրննձին յետս կը նահանջեն:

Հայաստանցի մայրն ստիպուած է այս կռուի օրերու մէջ իւր երախան դուրս չլծողուլ, որպէս զի այս արշաւանաց միջոցին անհաշիւ շուռտներէ ոտնակոխ որպէս կասեն «կոխ չեղնի», զգուշութեամբ կը չսկեն:

Գոյվածներն կռուի դաշտից նահանջեցին, որպէս մտօր պարիսպ ապաւինեցան տնեցոց սիրելի Եօլանի, Մայրիլի, Լաւանտի, Երազի, Չողոյի, Չախալի, Աամպարի, Քարսանի, Էէկոյի... (գոմշու անուններ) առջև և որոց մտաբքը հաստատուեցան:

Հուռտաներն չկարողացան մերձենալ այս աշխատասէր գոմշուներուն և արտաբնէլ գոյվածին, բայց նեղը լծեցին, ամէն կողմէ պաշարեցին՝ նա այլ ևս չկարողացաւ դուրս գալ, տան պահասութիւնը հոգալ:

Փետրուարի վերջի երեկոյին էր, մարդիկ տեսան գոյված ընկձած. տան բարիքը աւարի առնուած, ստիպուեցան յօգնութիւն հասնիլ գոյվածին: մի հնարով շուռտներն դուրս արտաբնէլ որպէս զի գոյվածն ստիպեալ մնայ նոյն տունը, ըստ առաջնոյն բարիքով լեցնէ:

ԵՈՒՈՏ Ի ԴՈՒՐՍ, ՄԱՐՏ Ի ՆՈՐՍ.

Փետրուարի վերջի երեկոյին՝ մտաբքը կոխած էր. շուռտահան անուանեալ երկու մարդիկ ձեռներն մի մի շոր ոչխարենի, և ակիչ բռնած մեկնեցան շուռտահանի գործողութիւն կատարելու:

Հուռտահանը եթէ աղջիկ է, տանտիկնոջ վարտիբքը և ակիչ ասելով կը գնայ գործողութիւն կատարելու:

Դուք լսած կամ տեսած էք Բագրևանդայ գոմերն ներսէ ներս են, տանը դռնն առաջ ծածկած ցուխք մի կայ և բակ. որ ունի դրսի դուռ, այս դռնն աջ կամ ձախ կողմն մի այլ դուռ կը բացուի. այս է ոչխարաց գոմը, որ մի որմով տան ղուպային միացած է, Գոմին մօտ կամ քիչ հեռուն է մարազն, ուր յարգ և խոտ զետեղուած է, դուրսը գոմի և մարագի առջև են գիւղացւոյն ցորեանի և դարիի հորերն. իսկ բակին ներսն տան դռնն աջ կամ ձախ կողմն ևս կը բացուի մի դուռ, այս ևս գոմ է մանր սեւամալի (եզ, կով, հորթ). այս գոմի միջէն ներս մի դուռ կը բացուի, այս է գոմէշնոցն որ ներսէ ներս լինելով՝ շատ տաք կը լինի, ձրմեռն ցմիշտ մի փոքր լուսամտից, որ բացուած է տանեաց վերայ, կը բարձրանայ շոքին, ու նախ ձիննելոյզէն բարձրացող ձիւի նման է:

Գոմնոցի մի կողմն ևս բացուած է մի անցք, այստեղ ջրհոր կայ, մօտը քարեայ մեծ աւազան

1, Տրասպեղոնի գիւղօրէից մէջ այս գործողութիւնը Յունուարի առաջին գիշերն կը կատարեն, Լաշի Թփի ծիւղն կանանն, որմերուն, անասուններուն, սիւններուն, հարուածներ կտան, լաւ եղանակէն մին տուն կը բերեն, ուշադրութիւն կը դարձնեն թէ որ ոտն նախ ներս կը դնէ. եթէ աջ դրսւ բարեբարողութիւն է, ապա առջևն օվոնք. ամսանոց համար ջրով պատրաստած կեր եւ մանրած դղում կը դնեն երկու եղձիւններու վերայ վառած մոմ կը դնեն, վատուելու յեւէն գուշակութիւններ կանան:

մի, Եմրողը ձեռնն այստեղ պիտի ջրեն գոմէշներն և լուան ամեն օր, երբէք դրսի օդ չպիտի առնեն և ոչ արևու երես տեսնեն:

Հուռտահաններն բարձրացան տանիք, տանը դուպան, որ ներքեւէն քանի մասերու բաժանուած էր, իւրաքանչիւր մասը ունէր վերեւէն բացուած լուսամուտ, որոց շուրջն ակիւշով զաղ (գիծ) և քաշեցին. ոչխարենիով այս այն կողմ հարուածներ տալով գծերէ դուրս ելան. տան շուրջն ևս զաղ քաշեցին:

Մեր շուռտահաններն ուրիշ տարիներ ևս փորձուած էին այդ տարին իրենց համար յայտը անցած էր, եթէ յարող անցած չլինէր, այս տարի ուրիշները պիտի կատարէին շուռտահանի գործողութիւնը, որ և լինելու էր փորձուած մէկը:

Հուռտահաններն առանց ճրագի նախ ուղղուեցան ոչխարաց գոմը, աջ ոտներին դռնէն ներս դրին, հասան գոմի վերին անկիւնը, Յիսուս Քրիստոս ասելուն շուռտներն ղողաւին, շուռտահաններն այս այն որմին առիքին սիւններն սկսան հարուած տալ ոչխարենիով և ասել—Հուռտ ի դուրս, Մարտ ի ներս, և շարունակ իւրաքանչիւր հարուածին կրկնել վերի բառերն:

Դուք եթէ տեսած էք թաշկինակով ծանձ քրշողներ, կարող էք մեր շուռտահաններու վերայ դադար մի կազմել:

Հուռտահաններու ոչխարենոյ հարուածներն որմերուն առիքի գերաններուն սիւններուն և օդի մէջ նաև ամեն վայր հասաւ. հետզհետէ ոչխարներն ևս մերձեցան դռն. շուռտներն ևս սրգէն դըպան արացուցած (տեղ տեղ փակել, որ այլ ևս այս այն կողմ չէ կարող շարժիլ և փախչիլ) էին, որոց մին շարունակ հարուած տուող ընկերոջ բաղակներու տակէն գլուխը մտցնելով դուռը կը բանայ աջ ձեռքով, որ և հարուածներու ներքև անհաշիւ շուռտներն դուրս կը թափին:

Հուռտահաններն իրենց արարողութիւնը կատարելով դռնէն դուրս ելան, դուռը դոցեցին, դրսն դուրսն կիտարողակ զաղ մի քաշեցին, որպէս զի արտաբնուած շուռտներն այլ ևս չկարողանան այդ գծէն ներս անցնիլ:

Առաջին գործողութիւնը ոչխարաց գոմը նորա համար կը կատարուի որ ուրիշ տեղերէ արտաբնուած շուռտներն չխուժեն ներս, բաղմամբիւ ոչխարներու մէջ զետեղուին, որ յետոյ արտաբնելն գծուար լինի:

Հուռտահաններն քանի հարիւր հարուած որ տուած էին, այնչափ ևս կրկնած էին, «Հուռտ ի դուրս Մարտ ի ներս»:

Հուռտահաններն այս անգամ մտան մանր մաւերու գոմը, ուստի անցան գոմէջիկնաց ակտուր, յորմէ մտան ձախար (գոմէշներն լուսալու տեղ), այստեղ իրենց գործողութիւնը կատարեցին, ջրհոր

1, Տանը բոլորը գիծ քաշելու սովորութիւնը սատանայապաշտ եզդիք նաև ունին, երբ դրանց զավառներն մի տուն անիծեն, տան բոլորը գիծ կը քաշեն, տեղ տեղ քարեր կը կուտան. շատ անգամ տեսնուած է որ նրք եզդիի մի գտնուած վայրէ շուրջն գիծ քաշեցին, դուրս չգար, թէևս այժմ եզդիք այդ բանին այնչափ կարեւորութիւն չեն տար:

2- Դուռը բացողն այս մեղ կը գործածէ, որպէս զի հարուած տուողը թոյլ չտայ շուռտներն դուռը բացողի ետևն խոյս տան, դարձեալ գոմի մէջ իրենց տեղերն գետնողին:

րի ։ վերայ աւելի դաւադուեցան ։ Ճալաւի մուտքն ևս գծեցին ։ դարձան գոմէշերից վերան ։

Կատարելիք մեծ գործողութիւնը այստեղ էր ։ անժիւ շուտանք այս տար վայրն զետեղուած էին ։ ջրհորէն և ճալաւէն արտաբուռածներն ևս այստեղ խմբուած էին ։ շուտահասներն դժուարին կացութեան մէջ էին ։ այստեղ կային լաւ լաւ դոմէշներ ։ որոց մէկին մուրքին մէջ կայր դողվածին ։ որ տան առատութիւն կրնայէր ։

Կը խորհին շուտահասներն ։ — շուտներն դուրս պիտի վանենք ։ սակայն ինչպէս անենք ։ որ հարուածներն չառնեն դողվածին ։ «Եթէ դողվածին քիսաւ ։ պիտի նեղարտի ։ լուրքի ։ իրենց տունը թորկայ էրթայ ։ և յըմտ էնենք որ ընդրայ չբիսնք ։»

Եյստեղ կային կուտարք ցուէր ։ անձին ու վնասակար մատաներ ։ որք շուտներուն սիրելի առատութեան էին ։ որոց շուրջն ։ ականջներու ։ մինչև անգամ մագերու մէջ զետեղուած էին ։

Կային այստեղ խածնող և սրացի հարկանող ձիանք ։

Եթէ գուք շատ ձի գործածած էք ։ տեսած կը լինիք ձիու պոռի և բաշի ձարերուն վերայ փորրիկ փորրիկ հիւսուածներ ։ որ կը կարծէք թէ մարդկային ձեռքով կանոնաւոր փորրիկ հիւսուածներ են ։ որպէս փորրիկ աղջկանց ծածկերն ։

Եյր ամենը շուտաներու գործ են ։

Շուտներն ճակատակ դողվածի կամաց դրած են անպէտք և վնասակար անատներ ։ նամանականց ցուլ և որձ ձի ։ որոց վարժեցուցած են չարութեան մէջ ։ որոց ականջն կը մտնեն ։ կը գուգան որ եղջիւրով սրացի դարենն ։ կամ խածնեն ։

Շուտներն մեղ նման են ։ բայց անտեսանելի ։ նորա ունին խլարիկի քողոզ ։ կըք քողոզի ներսն գուրս դարձուցին ։ իրենց զուլը գրին ։ կը տեսնուին մարդոց աղքատի կերպարանքով և աղաոտ շարքով և խիստ ազեղ ։ կըք քողոզ ուղիղ գրին ։ այնչափ կը փորրանան որ անչայտ կը լինին ։ իսկ կըք քողոզը վայր առնեն կերեկին որպէս մարգ և աղջիկ ։

Շուտներն այս կեկոյին զգացած էին որ իրենց դէմ հալածուած էին ։ գող առած է իրենց հողին ։ ամբողջը քողոզ դրած փորքացած են ։ և անբեղով գարձած ։ մտած են իրենց սիրած անասնոց փորի տակ և շուրջը պահուած ։

Շուտահասը սխաւ իւր գործողութիւնը կատարել ։ «Մարտ ի ներս ։ Շուտ ի դուրս ։ սխաւեցաւ կրկնուի ։ շփուտոց ու շէկոցի ձայն լցուեցաւ գոմէշերէններու ախոսն ։ հարուածներն բազմապատկուեցան շուտներու խմբուած վայրը որք խոյս տունին այս այն կողմ ։ ապա ճարահատեալ փախան շուտահասներն ստիպուեցան հալածել ։ սակայն շուարեցան թէ մի բուցէ հարուածներէ մին դողվածին առնէ (վասն զի հաստատ էին գիտէր թէ դողված լաւ դոմէշներու որ մէկին մուրքն է) ։ որով ստիպուեցան սահասարակ ամեն կողմ հարուած տայ և աւել ։ «Վողված ։ մանեմ ։ քրքի ևս քու հետ չիմ ։ շէղի ըուքիս ։ շէղի թորկիս զՄուսլիկ ։ Շէկուն ։ Ծաղիկ ու էրթմաս ։ դու ու զքու Եստուած ։»

Շուտահասներն լաւ լաւ գոմէշներուն և ձիերուն ևս թեթեւ հարուածներ տուին ։ սարսափահար եղած շուտներն խոյս տուին ։

Եղած է որ շուտահասի անդուշտութեան պատճառաւ քանի հարուածներ առած է դողվածին ։ որ և ըստրած ։ վերուցած է տան ամեն հարստութիւն ։ պէրաբեամբ (Եստուածէ շնորհուած հարստութիւն ։ եթէ ունեցածը ուտէ ։ գործածէ ։ չպահասիր) ։ մեկնած է մի այլ տուն շէկոցելու և հարստացելու ։

«Ահա ։ այս պատճառաւ է ։ կատէ Բագրեանդցին ։ յանկարծ տեսար որ մի տուն աղքատացաւ ։ մի ուրիշ տուն ևս հարստացաւ ։»

Շարունակեցին շուտահասներն իրենց գործ ։ արտաբացին շուտներն ։ լցին անդէից ախոսն ։ նոյն ձևով գծեցին դասն առաջ ։ դուռը գոցեցին ։

Եյստեղ և կոյներու ։ կոյներու ։ արջարներու ։ երկններու և հորթներու մէջէն նոյն ձևով արտաբացին ։ լցին բակը ։ այստեղ ևս իրենց արտորոշութիւնը կատարեցին ։ Մտան մտաւոր ։ ուստի տուն ։ չմտացան նաև սկար մարդոց հարուածներ տայ ։ որպէս իւղի բղկին ։ ալիւրի փեթաքին ։ ձաւարի ամանին ։ խմորի դաշին ։ և այլն ։

Շուտներն արտաբացին ։ լցին բակը ։ ուր հաւարուած շուտներն կը դողան ։ կը սրտըրան ։ կուլան ։ աղչանք ու պաղատանք կանեն ։ ներս ընդունուիլ կը խնդրեն ։ սակայն անգուժ շուտահասներն բակն անգամ կը զլանան ։ անտի ևս կարտաբան ։ Այստեղ ևս զաղը քաշուեցաւ ։

Եյս գործողութիւնը ևս կատարուեցաւ մարզի մէջ ։ ցորենի և գարուց հորերու վերայ ։

Դուրսը ցուրտ և բուք է ։ շուտներն ձեան վերայ կը դողդրուին ։ մերկ ու բարիկ են ։ բռնած են իրենց երախայոց ձեռքը կամ գրկած են ։ այս այն կողմ ։ կը վազեն այս այն դռան կը մերձենան ։ կը պատահին գոռած զաղերուն ։ որ իրենց առջև անանցանելի ահագին անգուռի մի կը տեսնեն ։ երգիկ կը վազեն ։ լուսամուտներէն ներս թափանցելու ։ այստեղ ևս պատահեցան զաղերու ։

Վերջապէս շուտներն ճարահատեալ իրենց երախայոց ձեռնէն բռնած ։ եկան գծերու շուրջն շարունեցան ։ սպասեցին որ անցնէին իրենց մին դուրս դայ գործով մի ։ գիծը խանգարի ։ միջոց գտնեն ներս խուժելու ։ սակայն անցելի իրենց հրահանգը առած են ։ զգոյշ են ըստ ամենայնի ։ ականջ չեն կախէր շուտներու ու իցէ շրջուցներուն (բուքի այլ և այլ ձայներուն նշանակութիւն կտան ։ կարծելով թէ շուտներու այլ և այլ խնդրանաց ձայնն է) ։ դուռը ամրապնդը փակուած է ։ դրսէն ամրացած ։ ներսըն գուռն ետև ևս ակիշ ձգուած ։ որպէս զի շուտներն եթէ մի հնարով դռնէն ներս խուժեն ։ ակիշ վերայէն չկարողանան անցնիլ ։

Երգէն հրահանգ տրուած է տան ամեն մի անգամին ։ որ մէկն դուրս չպիտի ելլայ ։ որչափ ևս դուրսն գործ ունենայ ։

«Եթէ մէկն դուրս ելլայ ։ կտան ։ եթէ գծին վերայ կոխեց ։ շուտներու առջև կանգնած պարիսպը կամ պեղուած անգուռը կանկայտանայ ։ ներս կը խուժեն ։ իսկ եթէ չկոխեց գծի վերայ ։ շուտներու խուժըր դիւք կը շարիշտակեն ։ գերի կը վարեն ։ սարը կը տանեն ։ կապանն կամ որոյ հետ կամուսանան ։ վերջապէս իրենց վրէժն կը լուծեն ։ քարէ կամ փայտէ կը ձգեն ։ կամ հորերու մէջ կիծեցնեն ։ կամ քանի օրէ յետոյ կարձակեն ։ որ և գայով տեսածներն կը պատմէ ։»

Ըստ Ժողովրդեան ասութեան քանինք դերի տարուած են ։ յետոյ գտնուած այրերու և հորերու ։

1. Շուտներու ամենայնրոպ հաստատուն բնակարարը ջրորներն են ։

մէջ. տուն բերուած են, սակայն նորա կախարդուած  
Դինելով խոյս տուած են շուտաներու մէջ:

Արդ այս անցիկը որչափ որ այս գիշեր շուտ-  
ներու սպասիչ ճիրաններէն ազատուած են, սակայն  
գարձեալ անբուն Տակելու ստիպուած են. մտահո-  
գութեան մէջ են մի գուցէ դովաթն ընթացած ու  
գացած է: շուտներու Տետ դուրս ելած է: Տնեցի-  
ներէն քանին մտնեցան դռան, սկսան ուշադու-  
թիւն դարձնել դրսէն եկած ձայներուն, գուշակել  
վէ շուտով վէ դովաթի ձայնէ. ամենախորը ձայ-  
նի ինչ ինչ մեկնութիւններ արուեցաւ.—այս այն  
ինչ ձայներն շուտի ձայներն են, որք կանխեն շուտ-  
տաճաններն այս ինչ ձայներն ևս շուտի երեխայոց  
ձայներն են, որք ցրտէն և անօթութենէն կուլան և  
կը ստանան ու մեկտան:

Շուտներն պահ մի իրենց դուռը: պահ մի եր-  
գիսի շուրջն կանգնած Տարբարու Տարներ բա-  
նեցնելէ յետոյ յոյսերին կտրած կը մերձենան ու-  
րիշ գոներ, նոյն անեցոյց բարեկամաց և ազգակա-  
նաց նման ձայներ կը հանեն: որպէս զի տնէն մի  
մարդ դուրս հաննա, կամ նոյն տան աղջկայ սիրա-  
Տարի ձայնի նման ձայն կը հանեն. իսկ եթէ երի-  
տասարդ կայ նոյն տունը, նորա նշանածի ձայնի նը-  
ման ձայն կտայ, որ երիտասարդն ձայնը առածին  
պէս քնթաթման գուրս կը վաղէ: որով կամ շուտ-  
ներէ կը գերուի և կամ շուտներն գաղը աւրուած  
գանելով խորովին ներս կը խո ժեն:

Այն աղջիկն կամ այն երիտասարդն որ շափա-  
զանց սիրոյ կրակին մէջ կը բորբոքին, անհեռատե-  
տութեամբ փոխանակ իրենց սիրահարին իրենց առ-  
ջ և կանգնող և սիրահարին նմանող շուտին վիզը կը  
փաթթուի: դաղը կարուի: շուտներն ներս կը խու-  
ժեն: պատճառ կը լինին իրենց տան դժբաղդու-  
թեան:

Յուսահատ շուտներն երբ ներս խուժեն, կը-  
ռիւ կը բանան դովաթին դէմ, կարտաքսեն զդո-  
վաթ, որ և կը մեկնի տանելով իւր հետ տանը բա-  
րաբարը և Տարտութիւնը, որով անպոյշ սիրահա-  
րն պատճառ կը լինի այս դժբաղդութեան:

Այն դովաթն որ այս կամ այն շուտահանի ան-  
զոյշ վարմանով արտաքսուած էր և կամ ինք ը-  
նթաց հեռացած էր. կրկին կը վերադառնայ այն  
տունը, ուստի հեռացած էր: ձայն կը ձգէ, կը խնդ-  
րէ ներս ընդունուիլ: Տնեցիք այս ձայնին հաւա-  
տարմութիւն չընծայեցին:

— «Վու շուտ իս ասացին, էդ յըմալ զըս-  
տու կենիս որ մզի խափիս, ներս մտնաս»:

— «Վու ընծի գինաս կասէ դովաթն, ես ձեր  
տան դովաթն եմ, ես Վուսկան, Ըէկոյի և այլն,  
մտորին մէջ կը կենայիս յըմն գաիս ևս ճրագ կարու-  
ցած՝ մէկնելուն յիմցուցածիմ որ յելլան տաւար-  
ներուն գարման տան»:

— «Գնա մեր դռնից, կը պատասխանեն ներսէն,  
քղի շիթորիկնք որ դաս, գու շուտ իս յըմալ կենես  
որ մզիկ խափես»:

Վովաթն առանց երկար խնդրելու՝ հեռացաւ,  
գիւղի մէջ սկսաւ որոնել այնպիսի տուն, մի որ զինք  
սիրով ընդունի:

Յանկարծ գտաւ մի գուռ, որ բաց էր՝ այս  
տան տէրը տարիներէ ի վեր աղքատութեան մէջ  
կը սոչորուէր: իւր տանը բան չկար, քաջութեամբ  
դռներն բացէր՝ կտակէր դովաթն, վասն զի այս-  
տեղ շուտներու համար ապրուստ չկար որ ներս  
խուժէին:

Վովաթն բարե տուաւ, մտաւ ներս իւր հա-  
րստութեամբ տեղաւորուեցաւ մտորի վերին ծայրը:  
Տան տէրը դուռը յանկարծ գոցեց, որպէս զի  
շուտներն ներս չտուէին:

Տան տէրը առաւօտ շուտ զարթեցաւ, ինք զինք  
հարստութեան մէջ գտաւ:

Վուր տեսած կամ լսած կը լինիք հարսներն  
ու աղջիկներն որպէս փոքրիկ քոյրոցներ կը կարեն,  
գունաւոր թեկերով կը նշշեն: Տեսարնդատաջի ե-  
րեկոյան եկեղեցիէն վառած տուն բերուած մտ-  
մով այդ շուտի քոյրոցներն կը վառեն, ծուխը կը  
շնչեն, մոխիրն ևս ջրի մէջ խառնելով կը խմեն: որ-  
պէս զի կոխան շինին, գերի շտարուին, շուտներէ  
չխափուին:

Այն մի քնած միջոցին դրսէն կը լսէ իր մար-  
դու ձայն, կեղայ դուրս, կուժը առնելով մարդուն  
կը հետևի, կինը երբ աղբիւրի վերայ կուժը պիտի  
լեցնէր «Յիսուս, Քրիստոս» կասէ, կը տեսնէ իւր  
մարդը կարծածը փոքրանալով մի սե կծիկ կը լինի,  
կասէ— «այ Խստոս, Քրիստոսը աչքդ մտնայ» կանե-  
րուցութեանայ:

Աինը նոր կղզայ որ շուտէ խարուած է, տուն  
կը վերադառնայ, մարդը անկողնոյն մէջ կը գտնէ,  
որ կը հարցնէ կնոջն նորա ուր գնայն, կինը կը  
պատմէ եղածն:

Այս տեսակ պատմութիւններ հազարաւոր կան:

Ս. ԱԵԿՈՒՆԻՍ.



Մ Ե Ն Բ Ե Լ Ո Ւ Ի Բ .

ԱՇՏՈՒՐԱԶԳՐԱԿԱՆ

Աշխարհիս ամենափոքր հասարակագե-  
տութիւնը — Մարդնիս կղզոց 12 հազարամտը հե-  
ռու գտնուումէ Տաւուրա անունով մի կղզի, որի վերայ է  
աշխարհիս ամենափոքր տէրութիւնը: Այս կղզին միայն 2  
հազարամտը լայնութիւն ունի եւ 35 քմակէ: Տաւուրան  
անկախ հրատարակուեցաւ 1856 թուին եւ թագաւորական  
գահը բարձրացաւ Բարդիւնի ընտանեցի անդամներէից մէ-  
կը: Այս թագաւորն իշխեց քարեքարտիկ կերպիւ 46 տա-  
րի եւ մեռաւ 1882 թ. մայիս ամսին: Մահուանից առաջ այս  
թագաւորը ցանկութիւն յայտնեց, որ ոչ ոք իրեն շաշոր-  
դէ եւ կղզու վերայ հասարակագետութիւն լինի, Կարլոս  
թագաւորը, այս էր Տաւուրի միապետի անունը, ոչ միայն  
ժառանգ չունէր, պէ նաեւ չեղաւ մէկը, որ ժառանգե-  
կամենար նրան, ուստի կղզին 1886 թ. հասարակագետու-  
թիւն հրատարակեց: Այս կղզու սահմանադրութիւնն ամե-  
նից ազատամիտն է, որա շնորհիւ կամայց էլ ձայն ունի  
ընտրութեանց մէջ: Հասարակագետութեան նախագահն ընտ-  
րումէ 6 տարով: Նշանաւոր է այն, որ պաշտօնաններ, ա-

- 1. Մեղեցիկ գիշերը, կասն Խարբերու կողմ:
- 2. Բագրեանաղայ հայ ժողովուրդն մեծաւ մասամբ եկ-  
տրներն են, սոցա մէջ Շուտի աւանդապահն ամենից անեւ  
Պուլանիսայ ժողովուրդն է, ընկններն այժմ թերահաւատ են,  
դեռ կը ծաղրեն Ջընն, որ գոմի մէջ արծաւուած հորթն շուտ  
կարծած դուրս արած է, հետեւեալ օր տեսած են գայլերն  
կերած են, քանի քանի այսպիսի դէպքեր կը յիշեն, կը ծաղ-  
րեն: